

xisted. Իր մէկ քանի ուղեւորութեանց ասան՝ Պետերմաննի կ'ընկերանային վէթցսէին՝ Դամասկոսի բրուսաց հիւպատը, և Պրուշէ՝ երէց ի Պաղտատ. և միշտ իր ծառայութեան՝ Հայերը կը գործածէր, որպէս զի լաւագոյն վարժիմ, կ'ըսէ, անոնց լեզուին և խօսակցութեան:

1867—8ին այցելութիւն ըրաւ Պետերմանն իբրու հիւպատոս հիւսիսային Գերմանիոյ՝ ի Պաղեստին, յԱսորիս և յ'Երուսաղէմ. մեռաւ 1876ին ի Պատ Նաուհայմ: Մահուրէն ետքը փերզինանդ Խուսթի տպագրեց ի Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft (1884 յ'էջ 327—414) Պետերմաննի մէկ ընտիր ուսումնասիրութիւնը Պաթիսց Եղիտի դաւառաբարբառին վերայ:

Որովհետեւ յաճախ առիթ ունեցանք յիշատակել Պերլինի Ալպրիմիոյ ամսօրեայ տեղեկագիրքը (Monatsberichte), յաւելունք թէ 1869 մարտ. 11 ամսամթերթին մէջ (յ'էջ 216—248) անուանի աշխարհագիրն Հ. Կիպլըդ յօդուած մը հրատարակեց խորագրովս. « Նախնական պատմութիւն Հայաստանի և Հայոց » (Ueber älteste Landes- und Volksgeschichte der Armenien, հանդերձ քարտիսիս):

Շարայաբեյի

Ծ Ա Գ Ո Ւ Մ Ն

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹԵԱՆ

ա. Ծագումն քրիստոնէական ճարտարապետութեան. — բ. Իւր դասակարգութիւնն. — գ. Միջին դարն և իւր մեծութիւնն. — դ. Կրօնական շինուածոց ու ճոյն գծադատութիւն. — ե Նախկին եկեղեցեաց ձևը Ե դարէն առաջ. 1. Գեղմադամբանք, Աղբիւնամակամբ և Աղօթարանք. 2. Տաճարք (basiliques). — գ. Քիւզանդակամ ոճն:

Ա. Քրիստոնէական ճարտարապետութիւնն իւր ծագմանէն մինչեւ ի Եզար՝ հռոմէական ճարտարապետութենէ շատ չի տարբերիր: Այն ինչ եկեղեցին կրցաւ դետնադամբաններէ դուրս ելնել, իսկոյն իրեն սեփհականեց՝ ինչպէս պիտի տեսնեմք, բոլոր այն հռոմէական շէնքերը՝ զորս կրնար իւր պաշտաման համար գործածել: Քրիստոնեայք հեթանոսական տաճարաց գործածութիւնը արհամարհելով, աւելի քաղաքական շինուածոց վերայ աչք ձգեցին՝ որոնք կրնային իրենց ծառայել: Աստի կը սկսի ահա գլխաւոր կէտն ամենայն փոփոխութեանց՝ որոց ենթարկուեցաւ առ յապա քրիստոնէական ճարտարապետութիւնն: Սրբազան

ճարտարապետութեան բառադիտութիւնը լաւ բմբռնելու համար՝ հարկ է ստոյգ ժանօթութիւններ ունենալ այն ամենայն տարերայ վրայ, յուսող կը կազմուի հռովմէական ճարտարապետութիւնն :

Բ. Երբ դարէն սկսեալ մինչեւ արդի ժամանակներո հռովմէական ճարտարապետութիւնն երեք զանազան հանգամանաց մէջ գոյութեցաւ, ուստի և ըստ այնմ երեք զլիարար դասակարգութեանց կարելի է բաժնել զայն և

- | | |
|---|--|
| <p>ա. Հռոմեական ճարտարապետութիւն</p> | <p>1. Նախնական, Երբ դարէն մինչեւ Ժ դար :
2. Երկրորդական, Ժ դարէն մինչև Ի սկիզբն ԺԲ դարու :
3. Երրորդական կամ անոց, ԺԲ դարու և</p> |
| <p>բ. Կամարադեղնային (ogivale) ճարտարապետութիւն</p> | <p>1. Նախնական կամ, Կամարադեղնային ճարտարապետութիւն, ԺԳ դար :
2. Երկրորդական կամ Կամարադեղնային ճարտարապետութիւն, ԺԳ դար :
3. Երրորդական կամ Կամարադեղնային ճարտարապետութիւն, ԺԶ դարու և</p> |
| <p>գ. Վերականգնում, կամ վերագործ դեպ 'ի հին տրուեստն, կեն ԺԶ դարուն</p> | |

Գ. Շատ ժամանակէ 'ի վեր անժանօթ, և ԺԶ դարու ալլափոխութեամբ և իմաստասիրութեամբ զրապէս խանգարուած միջին դարն, փառք Աստուծոյ, այսօրուան օրս զարձեալ իւր նախկին յարգելի վիճակն առաւ : Դարուս մեծամեծ հանճարներն՝ անոր լիովին ուղղութիւն տուին, նոքա՝ ինչպէս Պ. Լասսիւ, Պ. Վիլլէ լը Դիւք, Հ. Մարտին և զեռ ուրիշ շատերն, որոնք միջին դարու ճարտարապետութեան հրաշալիքները, ուսումնասիրելով իրենց կեանքը մաշեցուցին, նոքա բնաւ չեն զաղորիւ հիանալէ այսպիսի անզուգական գիտութեան մ'առջեւ, որ այն հոյակապ շինուածոց զիւթական մանրամասն պատմութիւնը կ'աւանդէ : Երանի՛ դարու՝ որ օրրատօրէ բուռն եռանդեամբ կը ճգնի նորա հրաշալիքները յերեւան հանելու. քրիստոնէական արուեստի այս վերականգնումն առեւի ևս լաւագոյն եղաւ քան զառաջինն, որ բոլորովին հեթանոսութեան աղբիւրներէ բղխած՝ նորա զաղափարները և բարքերը կ'ուզէր վերածնանել :

Աւելորդ է անշուշտ բացատրելն թէ ի'նչ կ'իմացուի Միլիէն դար առաջ. որ է բովանդակ այդ պատմական շրջանն՝ որ կը ձգուի Երբ դարէն մինչեւ ցվերանորոգութիւն :

Դ. Կրօնական շինուածոց գնահատութեան մէջ, պէտք է, ա. զգուշանալ այն ձգման պէմ՝ որ կրնայ յառաջ գալ պահուած յիշատակարանի մը ընդհանուր և տիրող ոճէն : Մեծ շինուածքի մը՝ ընդ մէջ նախկին հիմնարկութեան և աւարտման, շատ անգամ յոյժ տարիներ և դարեր կ'անցնին, և ապա յաւելումներ ու նորոգութիւններ կ'ըլլան :

ճարտարապետութեան բառագիտութիւնը լաւ բմբռնելու համար՝ հարկ է ստոյգ ծանօթութիւններ ունենալ այն ամենայն տարբերաց վրայ, յոռոց կը կազմուի. հոսովմէական ճարտարապետութիւնն ։

Բ. Ե զարէն սկսեալ մինչեւ արդի ժամանակներս հոսովմէական ճարտարապետութիւնն երեք զանազան հանգամանաց մէջ գտնուեցաւ, ուստի և ըստ այնմ երեք զխաւոր զաստորութեանց կարելի է բաժնել զայն ։

- | | |
|---|---|
| <p>ա. Հռոմէական ճարտարապետութիւն</p> | <p>1. Նախնական, Ե զարէն մինչեւ Ժ դար ։
 2. Երկրորդական, Ժ դարէն մինչև Ի սկիզբն ԺԲ դարու ։
 3. Երրորդական կամ անցք, ԺԲ դար ։</p> |
| <p>բ. Կամարաղէղնային (ogivale) ճարտարապետութիւն</p> | <p>1. Նախնական կամ Կամարաղէղնային Նշարակածեւ, ԺԳ դար ։
 2. Երկրորդական կամ Կամարաղէղնային Ճառագողթարձակ, ԺԴ դար ։
 3. Երրորդական կամ Կամարաղէղնային Բոցար, ԺԵ և ԿԵ ԺԶ դարու ։</p> |
| <p>գ. Վերականգնում, կամ վերագարձ գէպ 'ի Հին արուեստն, ԿԵ և ԺԶ դարու</p> | |

Գ. Շատ ժամանակէ 'ի վեր անծանօթ, և ԺԸ դարու այլափոխութեամբ և իմաստասիրութեամբ դրապէս խանգարուած միջին դարն, փառք Աստուծոյ, այսօրուան օրս դարձեալ իւր նախկին յարգելի վիճակն առաւ ։ Դարուս մեծամեծ հանճարներն՝ անոր լիովին ուղղութիւն տուին . նորա՝ ինչպէս Պ. Լասսիւ, Պ. Վիոլէ Լէ Դիւք, Հ. Մարտին և զեռ ուրիշ շատերն, որոնք միջին դարու ճարտարապետութեան հրաշալիքները ուսումնասիրելով իրենց կեանքը մաշեցուցին, նորա բնաւ յեն դադրիւ հիանալէ այսպիսի անզուգական գիտութեան մ'առջեւ, որ այն հոյակապ շինուածոց դիմական մանրամասն պատմութիւնքը կ'աւանդէ ։ Երանի՜ դարու՝ որ օրըստօրէ բուռն եռանդեամբ կը ճգնի նորա հրաշալիքները յերեւան հանելու. քրիստոնէական արուեստի այս վերականգնումն աւելի ևս լաւագոյն եղաւ քան զառաջինն, որ բոլորովին հեթանոսութեան աղբիւրներէ բղխած՝ նորա գաղափարները և բարքերը կ'ուզէր վերածնանել ։

Աւերորդ է անշուշտ բացատրելն թէ ի'նչ կ'իմացուի Միջին դար աւուամբ. որ է բովանդակ այդ պատմական շրջանն՝ որ կը ձգուի Ե դարէն մինչեւ ցվիքանորոգութիւն ։

Դ. Երօնական շինուածոց գնահատութեան մէջ, պէտք է, ա. զգուշանալ այն ձգման դէմ՝ որ կրնայ յառաջ պալ պահուած յիշատակարանի մը ընդհանուր և տիրող տէն ։ Մեծ շինուածքի մը՝ ընդ մէջ նախկին հիմնարկութեան և աւարտման, շատ անգամ յոյով տարիներ և դարեր կ'անցնին, և ապա յաւելուածներ ու նորոգութիւններ կ'ըլլան ։

բ. Պէտք է յիշել որ զարգացումն ամէն զաւառաց մէջ մի և նոյն եղած չէ: այնպէս որ երբ հարաւային կողմերը տակաւին հոռմանեան ղրուագա, գործութիւնը և ոճը կը շարունակուէր, անդին հիւսիսային կողմերը շատոնց կը տիւրէր կամարադեղնային արուեստն:

գ. Դարձեալ հարկ է գիտնալ՝ որ մեր վերը ըրած դասաւորութիւնն չէ բոլորովին բացարձակ, այնպէս որ իւրաքանչիւր փոփոխումն չի պարունակուիր իւր անունը կրած դարուն մէջ: Այսպէս նոր սկսող դար մի քիչ շատ կապ ունի նախորդ դարու հետ, ինչպէս նախորդն ալ սկսողին հետ:

դ. Նոյնպէս յիշատակարանները քնահաստելու ժամանակ՝ պէտք է ուշ դնել նիւթոց տարբերութեանց, որոնք ըստ զաւառաց կը զանազանին ի միմեանց, և մանաւանդ տելլի գիւղական եկեղեցեաց նկատմամբ՝ դիտելու է նոցա արհեստաւորաց կոպտութիւնն և տղիտութիւնն:

Ե. Քրիստոսէ մինչեւ Էդուտանդիանոս անցած հալածանաց ժամանակ՝ նախկին քրիստոնեայք իրեւ իրենց եկեղեցի ունէին առանձնական աղօթարանները, և մանաւանդ Գետնադամբանները:

Ինչ կ'իմացուի Գետնադամբան անուամբ: Ինչ բանի կը ծառայէին անոնք ի սկզբանէ: Ե՞րբ է նոցա ծագումն: Թորո՞ւմ կը կայանայ նոցա ղրուագագործութեան մասնաւոր և խորհրդաւոր նշանն. ահաւասիկ ասոնք են մեր հոս քննելու գլխաւոր կէտերն:

Գետնադամբանք կը կոչուին այն ստորերկրեայ տեղումնք՝ զոր փորած են ոչ թէ հեթանոսք, ինչպէս ոմանք կ'ըսեն, այլ նոյն իսկ քրիստոնեայք, հոն իրենց մեռեալները թաղելու, կրօնական պաշտամունքներ կատարելու, և հալածանաց ժամանակ իրենց համար ապաստանարան մի գտնելու համար: Ի սկզբան Գետնադամբան անունը կը տրուէր միայն Ս. Էլալիստրասեայ գետնափոր գերեզմանին (crypte), որ էր նաև գերեզմանաստեղի սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պաղոսի, այլ ապա նոյն անունն լայնաբար տրուեցաւ նաև հռովմէական դաշտագետնոյն ներքեւ գտնուող՝ ինչպէս նաև իտալիոյ ուրիշ քաղաքաց մէջ եղած՝ գերեզմանոցաց ևս: Ոմանք ստուգաբանելով (Catacombe) Գետնադամբան անունը՝ յառաջ կը բերեն յուն. κατὰ-τομβος (ընդ դամբանաւ) բառերէն, իսկ այլք κατὰ κομβη (ի ներքոյ նաւու), իւր գլխիվայր կամարներուն նաւաձեւ ըլլալուն պատճառաւ: Վերջապէս ոմանք ալ յունարէն κατὰ (ի ներքոյ կամ ընդ) և լատիներէն combo (ընկողմանիմ) բառերէն:

Գետնադամբանք միշտ չափ մը խորութեամբ բացուած են գետնին տակ, վասն զի կանգուն մնալու համար՝ պէտք էր որ ստորերկրեայ սրահներն (galerie) հասնէին մինչև աւազի բաւական հաստատուն խաւերուն: Դարուվար սանդուղներն այգետառանց և երբեմն նաև եկեղեցեաց միջէն իջնելով, կը տանին զանազան գետնափոր դատիկոններու:

Գետնադամբանք երեք բանի համար սահմանուած էին. ա. Հոն կ'ընկու-

նուէին հաւատացելոց և մարտիրոսաց մարմիններն, զլիաւորապէս գերեզմանոցը էին. իրենց տարածութեան մեծ մասին մէջ կը ձևացընեն նորա բնգարձակ շինուածքով ստորերկրեայ սրահակներ, կամ (նեղ և նուրբ անցքեր), որոնք իսկ կը կազմեն գերեզմանոցը. վասն զի նոցա որմերն լի են երկայն պատեանաձեւ շիրիմներով՝ որոց մէջ հորիզոնաբար ընկողմանած են մարմիններն, և միմեանց վրայ շարուած՝ երեքէն մինչև տասնութիւն կարգ, յստ աւելի կամ նուազ բարձրութեան ըստ շատ կամ սակաւ ամրութեան հողաբարին, և ընդհանրապէս կանոնաւոր ձևով սրահներն երկայն և նեղ՝ եղած շիրիմներու մէջ ոչ միայն աստիճան աստիճան շարուած մարմինները կ'ընդունին, այլ նաև երբեմն ծայրերնին յատուկ ընտանեաց փորուած տապանատուներ կան (caveau): Սովորաբար տապանատան մէջ կը գտնուի նաև քանի մը մարտիրոսի շիրիմ, իբր պաշտպան միւս ամենուն:

բ. Գեանադամբանք կը գործածուէին կրօնական պաշտամանց, երբ հայաժանաց խստութեան ժամանակ քրիստոնեայք բնա չէին կարող զանոնց զոքսը յայտնապէս կատարել: Վասն զի բաց 'ի տապանաց սենեակներէ (cubicula) կը գտնուին նաև բուն եկեղեցիներ, և նոյն իսկ տաճարներ, համեմատութեամբ բաւական ընդարձակ, որոնք սովորաբար կրկին սենեակներէ ձեւացած են, և նեղ ու երկայն անցքերով իրարմէ բաժնուած, առանձինն երկու սեռից համար. հոն գտուած են նաև Մկրտատունք (Baptistère): Այս եկեղեցիներն կամ գեանափոր գերեզմաններն կճաբուով և նկարներով զարդարուած են, և շատ անգամ իրենց լոյսը և օդը կ'ընդունին զաշտագետնին վրայ բացուած ճեղքուածքէ մը. բայց սովորաբար հաւատացելոց անշուկ քայլերուն լոյս կու տային կաւակերտ ծխող կանթեղներ, որոց հետքերն կը նշմարուին ցարդ:

գ. Հուսկ ապա հայաժանաց ժամանակ գեանադամբանք քրիստոնէից փախըտարանք և ապաւինի տեղուանք էին: Ս. Աղեքսանդր յ' Բ զարու, Ս. Կալւրիստոս, Ս. Ստեփանոս, Ս. Սեբաստոս, և ապա Լիբերիոս և Ս. Վնիփակիտ քահանայապետքն գրեթէ գեանադամբանաց մէջ անցուցին իրենց բովանդակ կեանքը:

Եթէ ուշի ուշով քննենք գեանադամբանները, նոցա մէջ այնպիսի նկարազարդումներ (caractère) կը գտնեմք, որովք կը համարձակիմք անոնց ծագումը շատ հին համարելու: Նշան գեանադամբանաց մէջ ի վաղուց գտնուած և զեռ մինչեւ ցարդ զտնուող նկարներու ոճն հաւաստիք մ'ունին, որ կը յիշեցընեն մեզ արուեստից գեղեցիկ յեղանակը, այն իսկ է, առաջին Անտոնինեանց (կայսերաց) դարը: Որոց օրինակ մի կրնայ ըլլալ Նալիտոնայ որմնանկար (fresque) գերեզմանոցն. որոյ նկարները դիտելու ասան ամբշտ մնացին նորադանդ Գերմանիոյ ամենէն երեւելի գիտնականներն, անկասկածելի վկայք՝ որոնք բնա չվարանեցան Քրիստոսի առաջին դարու ընծայել այս յիշատակարանները: Արդ շատ հաւանական է որ նկարներն գեանափոր գե-

ընդամաններէն քոնի տարիներով վերջը սկսած ըլլան, նոյնպէս անոնցմէ ալ փառանակ մը յետոյ զարդերն այս գետնափոր տեղեաց, որոնք արդէն փոքուած էին միայն զերեզմանատեղի ըլլալու համար: Կրնամք ամենայն վստահութամբ կարծել որ այս զարդարանաց գործը կատարած ըլլան հաւատացեալք՝ հալածանաց քիչ մի խաղաղ թողած ժամանակ: Երկրորդ, այն խորհրդաւոր նշաններու գործածութիւնն և ճաշակն կից է քրիստոնէական ծագման առաջին ժամանակաց: Թուականը նշանակելու համար անշուշտ շիրիմներու վրայ հաստատուած են դրամներ և քանդակեալ քարեր, յորոց ոմանց վրայ փոքուած են Գոմետիանոսի դէմքն, նաև զեռ աւելի հին կայսերաց. այս զարդքն քանդակք շատ տեղ անարատ մնացեր են, և եթէ երբեմն անոնց շաղախէն ալ զատուած են, սակայն իրենց յատուկ տիպը անոր վրայ թողեր են: Հռոկ ապա տասնութէկ հազար տապանաց վրայ գրուած արձանագրութիւններ կան, որոնք կը ցուցնեն հին հիւպատոսական թուականները, զորս և հաւաքած է երեւելի հնագէտն Ռոսսի, որոց մէջ գրեթէ երեք հարիւր հաւան՝ Փլեսպատիանոսի ժամանակէն՝ այսինքն է 71էն սկսեալ մինչեւ չորրորդ դարու միջին թուականները աստիճանաբար կը յիշատակեն:

Շարայաբեկի

ԴՐԱՆՍԻԼՈՒԱՆԻՈՅ ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՈԼԻՍ

ՔԱՂՔԱՆ ԱՁԳԱՅԻՆ

ԱՅՆ ԵՒ ԱՅՆ ՕՐԷՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

(Տես յ'էջ 335)

Ի մասնաւորի, Միքայէլ Աբաֆի, իր ֆօկարաշի գղեկէն 1696 ին հրատարակած առանձնաշնորհութեան պատճէնի ձեռքը հրաման տուաւ Հայոց, որ « իբրեւ վաճառական մարդիկ առուսուր ընեն ըստ կամի »: Այսպէս բրին իրմէն ետքն եկող իշխաններն ալ: — Բնական է որ Հայք, այս առանձնաշնորհութեանց հետեւութեամբն, երկրին այլեայլ կողմերը կ'երթային, հոն պզտի վրաններ կը կանգնէին և իրենց ապրանքներոքն առուսուր կ'ընէին: Սակայն այդընձածին արուեստաւորներու և վաճառականաց խումբերն, որոնք

1 Տես Հանդէս Ամսօրեայ. 1893. Թիւ 5. էջ. 136' 4. — Թիւ 8. էջ. 329' 7 — 1893. Թիւ 3. էջ 40' 6. —